ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 18

21 հունիսի 2018 թվական գյուղ Սարալանջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, 1030 ԳԾԱՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՆ, 219 ՄԻԼԻՄԵՏՐ ՏՐԱՄԱՉԱՓԻ ՄԵՏԱՂՅԱ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ , ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, <<Հրապարակային սակարկությունների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 5-րդ և 8-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով գույքի շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ <<ԱՆՏ ՌԻԵԼԹԻ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության 2018թվականի մայիսի 21-ի եզրակացությունը

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ավագանին

որոշում է՝

1.Համայնքի ղեկավարի առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի սեփականությունը հանդիսացող 1030գծամետր ընդհանուր երկարության 219 միլիմետր տրամաչափի մետաղյա խողովակները օտարել աճուրդով:
2.Աճուրդի դրված ողջ խմբաքանակի համար սահմանել մեկ լոտ:
3.Հիմք ընդունելով որոշման առաջին կետում նշված գույկքի շուկայական արժեքի որոշման վերաբերյալ <<ԱՆՏ ՌԻԵԼԹԻ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության 2018թվականի մայիսի 21-ի մ եզրակացությունը , 1030 գծամետր ընդհանուր երկարության , 219 միլիմետր տրամաչափի մետաղյա խողովակների ամբողջ խմբաքանակի /լոտի/ համար մեկնարկային գինը հաստատել 4635000 /չորս միլիոն վեց հարյուր երեսուն հինգ հազար/ ՀՀ դրամ:
4.Հաստատել աճուրդի կանոնակարգը և աճուրդի մասին հրապարակին ծանուցման հայտարարության տեքստը համաձայն թիվ 1 և 2 հավելվածների:
5.Աճուրդը կազմակերպելու նպատակով՝
Ա)Ստեղծել աճուրդային հանձնաժողով հետևյալ անհատական կազմով՝
Հանձնաժողովի նախագահ՝

Ցոլակ Հովհաննիսյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ղեկավար

Հանձնաժողովի անդամներ՝

Ռիմա Ասոյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

Վաչագան Պապոյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Սամվել Հարոյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ավագանու անդամ

Մկրտիչ Մինասյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ավագանու անդամ

Բ)Աճուրդավար հաստատել հանձնաժողովի անդամ , համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ֆինանսիստ ՝Ռիմա Ասոյանին, արձանագրող հանձնաժողովի անդամ, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար ՝ Վաչագան Պապոյանին:

6.<<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն հանձնաժողովին օժտել հրապարակային սակարկություն կազմակերպելու լիազորություններով /աճուրդի կազմակերպիչ/:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ալեքսանյան Արման՝	կողմ	Կողմ-3	Դեմ-0	Ձեռնպահ-0
Մինասյան Մկրտիչ	կողմ	----------		
Հարոյան Սամվել	կողմ	----------		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

21 հունիսի 2018 թվական
գյուղ Սարալանջ

ՑՈԼԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ